ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1436-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Դիմումի առարկան և պահանջը.

Արման Մարատի Հակոբջանյանի ներկայացուցիչ Հասմիկ Եղնիկի Մարտիրոսյանը 29.09.2026թ. դիմել է Ճամբարակ համայնքի ղեկավարին Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ Արտանիշի տարածքի Դրախտիկ տեղամասի 1-ին պահաբաժնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի թիվ 88, 88/3-4, 88/1/2, 75/1 հասցեներում կառուցված ինքնակամ շինությունները, ինչպես նաև նույն հողամասում ինքնակամ կառուցված նավամատույցը, քարե պարիսպը և լողավազանը համայնքի անունով օրինականացնելու մասին որոշում տրամադրելու վերաբերյալ:

2. Գործի նախապատմությունը և դիմումի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Դեռևս 07.11.2025թ. Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետի տեղակալի թիվ Ե/7/2591-25 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ Արտանիշի տարածքի Դրախտիկ տեղամասի 1-ին պահաբաժնում Արման Հակոբջանյանին վարձակալության իրավունքով հատկացված տարածքում հայնաբերվել է ինքնակամ կառուցված 6,0մx10,0մ չափերի նավամատույց, 5,0մx5,0մ չափերի քարե պարիսպ և 17,0մx80,0մ չափերի լողավազան, որի վերաբերյալ կազմվել է «Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների վերաբերյալ» 10.10.2025թ. կազմված թիվ 210 արձանագրությունը:

Կից ներկայացվել է նաև թիվ 210 արձանագրության, Արման Հակոբջանյանի անձնագրի, կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրերի և դեպքի վերաբերյալ լուսանկարների պատճենները:

ՀՀ գլխավոր դաախազության պեական շահերի պաշպանության վարչությունից 17.10.2025թ. գրավոր տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ Արտանիշի տարածքի Դրախտիկ տեղամասի 1-ին պահաբաժնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի թիվ 88, 88/3-4, 88/1/2, 75/1 հասցեներում առկա քարե շինությունները հանդիսանում են ինքնակամ կառույցներ:

ՀՀ գլխավոր դաախազության պեական շահերի պաշպանության վարչությունից 30.10.2025թ. գրությամբ տրամադրվել է ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 10.07.2023թ. թիվ ՔՏՄ/18.9/14467-23 գրության պատճենը, ըստ որի «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ Արտանիշի տարածքի Դրախտիկ տեղամասի 1-ին պահաբաժնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի թիվ 88, 88/3-4, 88/1/2, 75/1 հասցեներում առկա քարե շինությունները հանդիսանում են ինքնակամ կառույցներ:

Փաստի առթիվ 11.11.2025թ. հարուցվել է վարչական վարույթ, իսկ 04.12.2025թ. համայնքի ղեկավարի կողմից կայացվել է թիվ 960-Ա որոշումը «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ Արտանիշի տարածքի Դրախտիկ տեղամասի 1-ին պահաբաժնում Արման Հակոբջանյանին կառուցապատման իրավունքով հատկացված հողամասում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի թիվ 88, 88/3-4, 88/1/2 հասցեներում ինքնակամ կառուցված քարե շինությունները, ինչպես նաև նույն հողամասում ինքնակամ կառուցված նավամատույցը, քարե պարիսպը և լողավազանը ապամոնտաժելու մասին:

Միաժամանակ Արման Մարատի Հակոբջանյանը ազատվել է վարչական պատասխանատվությունից վարչական տույժ նշանակելու ժամկետը լրացած լինելու հիմքով:

Արման Մարատի Հակոբջանյանը համայնքի ղեկավարի 04.12.2025թ. թիվ 960-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջով դիմել է ՀՀ Վարչական դատարան (Վարչական գործ թիվ ՎԴ2/0599/05/25): Դատարանի 23.12.2025 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, որոշվել է գործը քննել ընդհանուր կանոններով և նշանակվել է նախնական դատական նիստ: Ներկայումս գործի քննությունը գտնվում է ընթացքում:

Արման Մարատի Հակոբջանյանի ներկայացուցիչ Հասմիկ Եղնիկի Մարտիրոսյանը 29.09.2026թ. դիմել է Ճամբարակ համայնքի ղեկավարին Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ Արտանիշի տարածքի Դրախտիկ տեղամասի 1-ին պահաբաժնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փոոցի թիվ 88, 88/3-4, 88/1/2, 75/1 հասցեներում կառուցված ինքնակամ շինությունները, ինչպես նաև նույն հողամասում ինքնակամ կառուցված նավամատույցը, քարե պարիսպը և լողավազանը համայնքի անունով օրինականացնելու մասին որոշում տրամադրելու վերաբերյալ:

3. Վարչական մարմնի պատճառաբանությունները և եզրահանգումները.

08.10.2026թ. Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմում Արման Մարատի Հակոբջանյանի ներկայացուցիչ Հասմիկ Եղնիկի Մարտիրոսյանի դիմումի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ:

2026թ. հոկտեմբերի 20-ին ժամը 15:00-ին Ճամբարակի համայնքապետարանում նշանակվել է լսումներ, ինչի օրվա և ժամանակի մասին դիմումատուն պատշաճ ծանուցված լինելով չի ներկայացել, չի ներկայացրել նաև միջնորդություն այն հետաձգելու վերաբերյալ:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը և ներկայացված դիմումը՝ գտնում եմ, որ 08.10.2026թ. հարուցված վարչական վարույթ ենթակա է կարճման հետևյալ

պատճառաբանությամբ. Քննարկվող դիմումն ստացվել է 29.09.2026թ. մինչդեռ Ճամբարակ համայնքի ղեկավարի թիվ 960-Ա որոշումը կայացվել է 04.12.2025թ., ըստ որի որոշվել է չօրինականացնել, այլ ապամոնտաժել «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ Արտանիշի տարածքի Դրախտիկ տեղամասի 1-ին պահաբաժնում Արման Հակոբջանյանին կառուցապատման իրավունքով հատկացված հողամասում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի թիվ 88, 88/3-4, 88/1/2 հասցեներում ինքնակամ կառուցված քարե շինությունները, ինչպես նաև նույն հողամասում ինքնակամ կառուցված նավամաույցը, քարե պարիսպը և լողավազանը:

Նշված որոշումը 05.12.2025թ. փոստային առաքմամբ ուղարկվել է Արման Հակոբջանյանին, որն էլ անվավեր ճանաչելու պահանջով նրա ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան:

«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ Արտանիշի տարածքի Դրախտիկ տեղամասի 1-ին պահաբաժնում Արման Հակոբջանյանին կառուցապատման իրավունքով հատկացված հողամասում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի թիվ 88, 88/3-4, 88/1/2 հասցեներում ինքնակամ կառուցված քարե շինությունները, ինչպես նաև նույն հողամասում ինքնակամ կառուցված նավամաույցը, քարե պարիսպը և լողավազանը ապամոնտաժելու մասին Ճամբարակ համայնքի ղեկավարի 04.12.2025թ թիվ 960-Ա որոշման (վարչական ակտի) ընդունման համար հիմք հանդիսացող փաստերը, ինչպես նաև այն ընդունելու հիմնավորումները մանրամասն նկարագրված են որոշման մեջ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի համաձայն դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝ գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ, իսկ դ) կետի համաձայն, եթե՝դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ:

Տվյալ դեպքում առկա է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 1-ին փողոցի թիվ 88, 88/3-4, 88/1/2 հասցեներում ինքնակամ կառուցված քարե շինությունները, ինչպես նաև նույն հողամասում ինքնակամ կառուցված նավամաույցը, քարե պարիսպը և լողավազանը ապամոնտաժելու մասին Ճամբարակ համայնքի ղեկավարի չվերացված վարչական ակտ (Ճամբարակ համայնքի ղեկավարի 04.12.2025թ թիվ 960-Ա որոշում): Բացի այդ դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ (Վարչական գործ թիվ ՎԴ2/0599/05/25):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Արման Մարատի Հակոբջանյանի ներկայացուցիչ Հասմիկ Եղնիկի Մարտիրոսյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել՝ միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ գտնվող վարչական ակտի գոյություն ունենալու և միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով դատարանի վարույթում առկա գործ լինելու հիմքերով:
2. Սույն որոշման մեկ օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել Արման Մարատի Հակոբջանյանի ներկայացուցիչ Հասմիկ Եղնիկի Մարտիրոսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման պահից:
4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ճամբարակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. նոյեմբերի 04
ք. Ճամբարակ